

«ԳԱՀԱՆԱԿ» ՏԵՐՄԻՆԻ ՄԱՍԻՆ

Կ. Հ. ՄԿՐՏՉՅԱՆ

Մի շարք հին սկզբնաղբյուրներում դանազան առիթներով հիշատակված «դահանակ» տերմինի ուսումնասիրությունը բերում է հետաքրքիր հետևությունների:

Աստվածաշնչի՝ դրախտին վերաբերող հատվածում ասվում է. «Եւ գէտ ելանէր յՆդեմայ ոռոգանել զգրախտն, և անտի բաժանի ի շորս առաջս: Անուն միումն Փիսովն. նա է որ պատե գամենայն երկիրն Եւրատայ, անդ ուր ոսկին է: Եւ ոսկի երկրի այնորիկ ազնիւ. եւ անդ է սուտակն եւ ակն դահանակ»<sup>1</sup>: Այս հատվածից երևում է, որ «դահանակը» ոչ թե հանքաքար է ընդհանրապես, այլ՝ ակնաքար: Աստվածաշնչի մեջ դահանակ տերմինը մի անգամ էլ հիշվում է Տովբիթի գրքում՝ «...բիրւղ և դահանակ և սարդիոն ակամբք կազմեսցին»<sup>2</sup>, որը հաստատում է դահանակի ակնաքար իմաստը: Աստվածաշնչի ուսերեն թարգմանության մեջ դահանակին համապատասխանում է «камень опикс» դարձվածքը<sup>3</sup>, իսկ օնիքսը ժամանակակից հանքաբանության մեջ հայտնի ազատն է:

Աստվածաշնչի այս երկու թարգմանությունների համեմատությամբ դահանակի հարցը կարելի էր լուծված համարել դահանակ=աղատ համապատասխանությամբ, բայց այլ աղբյուրների հետ մանրամասն ծանոթությունը ի հայտ բերեց քննությունների կարոտ շփոթությունների մի շարք: Այսպես, նոր Հայկազյան բառարանում կարդում ենք՝ «Դահանակ, կամ ակն դահանակ», որը բացատրվում է այսպես՝ «Քար պատուական, որպէս ազգ շափիղայի կամ զմրխտոյ, կանաչ և դեղին, ի գոյն պրասի և դահինի...», բայց շփոթի և ընդ սարդիոնը, և ընդ սուտակն»<sup>4</sup>: «Բառգիրք Հայկազեան լեզուին» տալիս է նույն բացատրությունը. «Դահանակ, ակն ինչ պատուական, որ է կանաչ իբրև զզմրուխտ»<sup>5</sup>: Հր. Աճառյանի մոտ բացատրված է համարյա նույն ձևով. «Դահանակ, յատկապես ակն դահանակ, մի տեսակ ազնիւ քար՝ կանաչ և դեղին գոյնով»<sup>6</sup>: Ղ. Ալիշանը, Կիլիկիայի հանքային հարստությունները նկարագրելիս, ֆրանսիական հանքաբանների աշխատություններից տեղեկություններ քաղելով, նշում է. «...Ոչ քաջ հետաքննեալ Պուլլար լերինք, յորոց դեղնագոյն կրաքարս նշմարին կապոյտ երանգը պղնձեայ ածղատի և մանր կուտակք դահանակ քարի (malachite)»<sup>7</sup>: Դահանակը պղնձահանքի

<sup>1</sup> Աստվածաշունչ մատենան Հին և նոր Կտակարանաց. Կոստանդնուպոլիս, 1895, Ծն., գլ. Բ, էջ 2, 10—12:

<sup>2</sup> Աստվածաշունչ, Վենետիկ, 1860, Տովբիթ, ԺԳ, 22:

<sup>3</sup> Ветхий Завет, Быт., гл. 2, էջ 8, 10—12:

<sup>4</sup> «Նոր բառգիրք Հայկազեան լեզուին», հատ. 1, Վենետիկ, 1836, էջ 646:

<sup>5</sup> «Բառգիրք Հայկազեան լեզուին», հատ. 1, Կոստանդնուպոլիս, 1844, էջ 264:

<sup>6</sup> Հր. Աճառյան, Հայերեն արձատական բառարան, հատ. 1, Ներկան, 1971, էջ 614:

<sup>7</sup> Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 10:

ածղատի (օքսիդացած տեսակի)՝ մալախիտի հոմանիշ է համարված նաև Հյուբշմանի<sup>8</sup>, Սիմոն Գաբամաճյանի<sup>9</sup> աշխատություններում: Վերջինիս մոտ այն մալախիտից բացի նույնացվում է լազուրիտի հետ:

Ելնելով Լոլաժ հին ու նոր տվյալներից, «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում» բերվում է դահանակի երկու բացատրություն. «1—Շափուղայի կամ ղմրուխտի նմանություն ունեցող, կանաչ և դեղնագույն թանկարժեք քարի մի տեսակ: 2—(հնք.) Վառ կանաչ գույնով հանքաքար, որից պղինձ է ստացվում, մալախիտ»<sup>10</sup>:

Դահանակի բնույթը պարզելու փոխարեն նոր աղբյուրներում հարցն ավելի խճողված գտնելով, անհրաժեշտություն դրացինք դիմելու հայկական բուն սկզբնաղբյուրներին: Ամենահին տեղեկությունը մեզ հաջողվեց գտնել Անանիա Շիրակացուն վերագրվող «Յաղագս ականց պատուականաց» ծավալով փոքր, բայց հայ հանքաբանության պատմության համար կարևոր տեքստում<sup>11</sup>, Այստեղ բերվում են 33 թանկարժեք քարերի անվանումները և նրանց գլխավոր հատկանիշները (հիմնականում՝ գունային): Դահանակը բնութագրվում է որպես «կանաչ, առանց նշուղի» ականքաքար: Այսպիսով, հայտնի է դառնում «կանաչ ականքաքարի» մի լրացուցիչ հատկությունը ևս՝ այն ճաճանչափայլ չէ, շունի ցուր: Շիրակացու ցուցակում դահանակը դրված է 13-րդ տեղում, Աստվածաշնչից լայնորեն հայտնի և Իսրայելի 12 ցեղերի անունները կրող քարերից անմիջապես հետո, ըստ որում, 33 ականքաքարի շարքի հաջորդականությունը մշակելիս Շիրակացին Աստվածաշնչից քաղել և շարքի սկզբում է դրել առաջնակարգ 12 քարերը, ապա՝ ամենահին հիշատակություն ունեցողներից՝ դահանակը:

«Անանիայի հայոց Վարդապետի սակս բացայայտութեան թուոց» աշխատության<sup>12</sup> մեջ այլաբանական խրթին իմաստ ունեցող տեքստում, դահանակը հիշվում է երկու անգամ, ըստ որում՝ մի անգամ՝ դեղին գույնի հետ առնչված՝ «Իսկ գունակութիւն Իսաքարայ բացահայտէ մեզ ական դահանակ: Ձի որ ականջող ունի զգոյն դեղնութեան, զի որ ի վարժս կրթութեան երկասիրաբար դեղերին դեղնամակերևոյթեան տեսակն ճնշելով զմարմին խոնարհութեան» և ապա՝ «Ձի դերիսն ունիմք յԱստուծոյ ստացեալ անաշխատ պարգևս՝ զմարգարէականն և զքահանայականն և զթագաւորականն, զոր բացայայտեն մեզ ականք երկուց տեսակացն, սուտակին ասեմ և դահանակին»<sup>13</sup>:

«Վարդանայ մեկնութիւն հինգ գրոցն Մովսիսի՝ հետևողութեամբ նախնի հարց և վարդապետաց» և «Տօնական մատեան, որ և Տօնանամակ, և պատճառք տօնից կամ Տօնապատճառք» աշխատություններում դահանակի մասին բերվում են հետևյալ տեղեկությունները. «Դահանակ շափուղայն է, և է ծիրանեգոյն, և դիպակ ՚իսկոյ դեղին ստիք ունելով», «Չմրուխտն կանաչ է դեղնագոյն, և սա է դահանակն»<sup>14</sup>:

Միջնադարյան հայկական ձեռագիր աղբյուրներում դահանակի հիշատակությունը հանդիպում է ևս երկու տեղ: Թեպետ դրանք նոր բան չեն ավելաց-

<sup>8</sup> H ü b s c h m a n n, Armenische Grammatik, Leipzig, 1895—1897, էջ 133:

<sup>9</sup> Ս. Գաբամաճյան, նոր բառգիրք հայերեն լեզվի. 4. Պոլիս, 1910, էջ 352:

<sup>10</sup> «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հատ. 1, Երևան, 1969, էջ 464:

<sup>11</sup> Ա. Աբրահամյան, Շիրակացու մասնագրությունը, Երևան, 1944, էջ 260—261:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 72—75:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 242:

<sup>14</sup> ՏԵՍ՝ «նոր բառգիրք Հայկազեան լեզուի», հատ. 1, էջ 592:

նում ունեցած տեղեկություններին, բայց անհրաժեշտ ենք համարում մեջ բերել որպես լրացուցիչ փաստեր: Դրանցից առաջինը XV դարի վերջի գրիչ Կարապետ Բաղիշեցու շափածո հիշատակարանն է, ուր «դրախտ» հասկացողության բացատրության՝ իր ժամանակ տարածված մի տարբերակի մեջ հեղինակը նշում է. «Անդ և սուտակն է գովելի ն: դահանակն, որ է անգին»<sup>15</sup>:

Երկրորդ տեղեկությունը Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանցի» գրիչ Ստեփանոսի հիշատակարանն է (ըստ երևույթին, նույնպես XV դարի), որ լավատեղյակ անձնավորության մի գողտրիկ ներբող է հանքագործության մշակներին. «Զի թէպէտ ղինքեանս ի շարժմանս տեսանիսցեն ի վերայ սասանելոցն սարսափելոցն, սակայն զգիտ պատուական ջոհարին և զանգին ականցն՝ զսարգեհոնն և ղկարկեհանն, ղմրուխտն, ղթափանցն, որ դեղ է առողջութեանն, զտպաղիոնն, յասպիսն, սուտակն, յակիւնդն, ոսկեակն, եղուկն, գոճազն, բիրեղն, որ է շոշրահն, և դահանն, լավ համարելով ղմահ անձանցն, քան թէ ունայն ձեռք զվատացն ժառանկելով ղանուն»<sup>16</sup>:

Վերը հիշատակված տվյալներից կարելի է անել մի քանի եզրակացություններ.

1. Բերված բոլոր աղբյուրներում դահանակը միշտ հիշվում է որպես ակնաքար, ոչ մի անգամ չի նույնացվում սարգիոնի, սուտակի և մալախիտի հետ: Վերջինիս հետ նույնացումը անհնար է նաև այն պատճառով, որ մալախիտը, չունենալով անհրաժեշտ կարծրություն, երբեք չի օգտագործվել և չի օգտագործվում որպես ակնաքար:

2. Վաղ միջնադարում գոյություն ունեւր ակնաքարերի լավ մշակված տերմինաբանություն, և դահանակ անվան տակ հասկացվում էր միանգամայն որոշակի ակնատեսակ՝ «կանաչ՝ առանց նշուղի»: Ուշ միջնադարի հայկական աղբյուրներում նույնպես նկատվում է դահանակի որոշակի բնույթի լավ ճանաչողություն՝ «անգին» քար, որ տարբեր է բաղմամբիվ այլ ակնաքարերից, այդ թվում նաև սարգիոնից ու սուտակից:

3. Միջնադարյան աղբյուրներում դահանակը նույնացվում է միայն շափուղայի և գմրուխտի հետ: Այս նույնացումը, ինչպես պարզվեց աղբյուրների հետագա քննությունից, ունի միայն այլաբանական իմաստ: Վարդանի «Մեկնութեան» մեջ, շափուղայի հետ նույնացվելիս, դահանակին վերագրվում են այլ աղբյուրներում անհայտ գունային նոր որակավորումներ, մասնավորապես դեղինի հետ կապված: Շափուղան կանաչ լինելով հանդերձ, հաճախ հանդիպում է դեղնավուն ներփակումներ ունեցող տարբերակներով: Դահանակը շափուղայի հետ նույնացնելիս, ակներևաբար, վերջինիս գունային հատկանիշներն են նրան վերագրվում: Այս հետևությունը հիմնավորվում է Վարդանի «Մեկնութիւնից» բերված քաղվածքի և Եպիփան Կիպրացու՝ շափուղային վերաբերող հատվածի համեմատությամբ: Վերջինիս մոտ նշված է. «Հինգերորդ ակն շափելայն է, որ է ծիրանէգոյն, որպէս դիպակի սևոյ ծիրանափայլ է իւր տեսիլն: Բայց բաղում է աղգ սորայ ասեն և կապուտակ գոլ իբրև զլազուարդ»<sup>17</sup>:

<sup>15</sup> «Ժն դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց՝ Լ. Ս. Խաչիկյան, մասն 3, Երևան, 1967, էջ 45:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 537—538:

<sup>17</sup> «Սրբոյն Եպիփանու ասացեալ զանուանս վասն ականց պատուականաց», «Բաղմամբի», Վենետիկ, 1856:

Այսպիսով, գլխավոր հարցը, որ լուծում է պահանջում, դահանակի և շափյուղայի նույնացումն է: Անհասկանալի թվացող այս հակասությունը իր պարզաբանումն է ստանում Փիլոն Եբրայեցու «Աստուածային օրինացն այլաբանութեան» համապատասխան բաժինների քննությամբ: Աշխատության վերնագրում արդեն հեղինակը շեշտում է Սուրբ Գրքի տեղեկությունների և նրանց մեկնությունների այլաբանական իմաստը: Այս թեզը բազմաթիվ անգամ ընդգծվում է տարբեր առիթներով և ի մասնավոր՝ դրախտի հասկացողության մեկնություններում: Հստ նրա մեկնությունների, դրախտը խորհրդանշում է առաքինությունը, բարությունը, «բանն աստուծոյ»: Իր հերթին, առաքինությունը ունի շորս բաղկացուցիչ մաս, «զորից... մի տեսակ է խոհականութիւն, զոր Փիսոն անուանեաց»<sup>18</sup>: Մանրամասնելով իր մեկնությունները, Եբրայեցին նշում է. «Բսկ ըստ տեղոյ խոհականութեանն երկու են որակք արարուածք, խոհուն խոհաւղն. զորս սուտակի և ական դահանակի նմանեցոյց»<sup>19</sup>: Զարգացնելով այլաբանական մեկնությունները, նա շարունակում է. «Երկու քարինքն (նկատի ունի սուտակն ու դահանակը—Կ. Մ.) մի գուցէ Յուդայ է և Իսաբար»<sup>20</sup>: Ապա շարադրելով 12 հռչակավոր քարերի շորս կարգը (որոնց մեջ դահանակն ի սկզբանե չի մասնակցում) և նրանց համապատասխանությունը Իսրայելի 12 ցեղերին, Եբրայեցին գրում է. «Եւ գծադրեալ է ի սուտակին Յուդայ, ...իսկ ի շափիղային Իսաբար» և եզրակացնում. «Եւ շափիղայդ դահանակ ական է»<sup>21</sup>:

Այսպիսով, Իսրայելի 12 ցեղերից Իսաբարը մի դեպքում խորհրդանշվում է դահանակով, մյուս դեպքում՝ շափյուղայով: Ստացվում է դահանակ = Իսաբար = շափյուղա այլաբանական համապատասխանությունը, որից և՛ դահանակ = շափյուղա նույնությունը:

Զմրուխտի հետ դահանակը նույնացնելու փաստին ճիշտ բացատրություն տալը դժվար է. ըստ երևույթին այս դեպքում ելակետ է ծառայել դահանակի լայնորեն հայտնի վառ կանաչ գույնը, որին նմանեցվում էր (երբեմն էլ նույնացվում) նման գունավորում ունեցող զմրուխտը: Այսպիսի իրողություն մեզ հայտնի է Առաքել Դավրիժեցու «Պատմութեանը» կցված ակնաքարերի վերաբերյալ երկրորդ հավելվածից, ուր երկու անգամ հիշվում է զմրուխտի «ռամանի» (նոնաքարային) թանկարժեք տեսակը. «Ապա այս զմրուխտս որ ի մարդկանց ձեռն է, ֆոանգստան հասլ կու լինի, այլ տեղ չկայ: Դ գոյն է, ըզգիանի (սամիթի), ռեհանի, բանջարի, ռեհանին ու բանջարին ավելի գին շունին. ապա ըզգիանին մէկ մթղալն ի Հնդստան ԲՃ փլօրին գին ունի, ռամանին այլի այն գինն է»... «Ասացին թէ զմրուխտն փանիզարն քանց ամեն զահր է, մարդոյ որ զահր տուած լինի: Բ զիրաթ ռամանի ուղտի կաթով տան»<sup>22</sup>:

Ք. Պ. Պատկանովը մեջբերված աշխատության իր ռուսերեն թարգմանության համապատասխան ծանոթագրությունում հիշելով, որ զմրուխտը միշտ հայտնի է կանաչ գույնի տարբերակներով, իսկ նոնաքարը՝ կարմրավուն, զարմանքով է նշում այս դեպքում «նոնաքարային» (ռամանի) զմրուխ-

18 «Փիլոնի Աստուածային արինացն այլաբանութիւն», Վենետիկ, 1892, էջ 128:

19 Նույն տեղում:

20 Նույն տեղում, էջ 133:

21 Նույն տեղում, էջ 133—134:

22 «Առաքել վարդապետի Դավրիժեցույ Պատմութիւն», Վաղարշապատ, 1896, էջ 600:

տի հիշատակությունը<sup>23</sup>, ըստ երևույթին տեղյակ շիինելով նոնաքարի կանաչ տարբերակի գոյությունը, մինչդեռ, ինչպես կտեսնենք ստորև, դահանակը հենց կանաչ նոնաքարն է:

Հետաքրքիր է հայերի մոտ հանքաքարերի մասին եղած հին տեղեկությունների, նորակազմ տերմինների քննությանն ու ստուգաբանությանը նվիրված Ս. Երեմյանի աշխատության դահանակին վերաբերող բաժինը, որտեղ կարդում ենք. «Դահանակ բառն ալ կը սեփականի ընտիր և աղնիվ հանքի մը իբր անուն, հնչմամբ շատ նման է սլարսկ. հոմանիշ տեհնեճ, տեհնէ բառին... Այս հին բառը նախնյաց գրությունց մեջ նույն կը համարվի Զմրուխտի, Շափյուղայի, Սարդիոնի և Սուտակի հետ. բայց այժմ յուրաքանչյուրը առանձին հանք կը նշանակեն... Ի Ս. Գիրս այս բառը երկու տեղ հիշված կը համարվի, նախ Ծննդ. երկրորդ Տոր. մեջ: Կը կարգանք ի մերն. Եւ անդ է սուտակն և ակն դահանակ, Մն. Բ., Յոթանասնից մեջ. ...առ շառ շարսկ օնքա առ օնքա օնքա շարսկ: Իսկ Վուլկադան՝ ...ibi inventur bdellium et lapis onychinus: Թողլով մյուս եվրոպական լեզուներն՝ հիշենք զաղղականն. ...c'est la aussi qui se trouve Bdellion, et la pierre d'Onyx. Ակնհայտնի կ'երևի, թե հիշյալ պարբերությանց մեջ Դահանակ բառն շատ շփոթված է. ըստ Վուլկադայի պետք էր նաև մերն դրած ըլլար Եղունգն կամ Եղրնգնաքար... Դարձյալ. մեր Դահանակ բառն հն. յոթանասնից շարսկ = պրասինոսի շի համապատասխաներ, վասն զի հն. դահանակի հոմանիշն է առաջադր. ի բաց առեալ յոթանասնից թարգմանությունն, մյուս բաղմալեղվյան աստվածաշունչ մատյանք ըստ Վուլկադայի Ս. Գրքի հիշյալ պարբերության բառն՝ ամենն ալ Եղրնգնաքար թարգմանած են. անշուշտ եբր. բնագրին հավատարիմ մնալու համար» (այսպիսով, շափյուղա, սարդիոն, սուտակ, զմրուխտ շփոթին ավելանում է եղնգնաքարը—Կ. Մ.): Համապատասխան բաղադրություններ բերելով նաև Տովբիթից, Երեմյանը եղրափակում է. «Եվ քանի որ առ նախնիս այս բառի գործածությունը շատ շփոթած է, լավագույն է, ըստ արդի բանասիրաց Դահանակ բառը սեփականել Գղ. Malachite-ի»<sup>24</sup> (ուրեմն, մի կողմ է թողնվում նաև Եղնգնաքարը և օրինականացվում մի նոր շփոթություն—Կ. Մ.):

Մեջբերված տվյալների կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում նշել երկու հնարավոր հետևություն.

1. Յոթանասնից թարգմանությունն ու Վուլկադան (այսպիսով և Եվրոպական մյուս լեզուներով թարգմանությունները) գուցե մշակված տերմին չունենալու պատճառով են մեր դահանակին համապատասխանող տեղում դնում օնքա շարսկ = քար կանաչ և lapis onychinus թերիմաստ տերմինները (հին աշխարհում օնքս = ազատ ակնաքարը ամենալայն տարածում ունենալու շնորհիվ դարձել էր ակնաքար բառի հոմանիշը և այդ իմաստով էլ օղտագործված է Վուլկադայում):


2. Յոթանասնից թարգմանության շարսկ-ը համապատասխանում է հայերենում գործածվող «դահին»-ին (պրասին), որ բացատրվում է՝ «...է բանջար ինչ ուտելի և լայնատերև քան զբոյս խստորոյ»<sup>25</sup>, Այս դեպքում դահա-

<sup>23</sup> К. П. Патканов, Драгоценные камни, их названия и свойства по понятиям армян в XVII веке, СПб., 1873, էջ 25:

<sup>24</sup> Ս. Երեմյան, Հանք և իրենց ստուգաբանությունն, «Բաղմալեպ», 1899, էջ 200:

<sup>25</sup> ՆՁԹ, հատ. 1, էջ 592:

նակը հնագույն ավանդույթով կարող է մակաբերված լինել «դահին»-ից, նկատի ունենալով վերջինիս բնորոշ «սոխի կանաչ» գույնը: Ինչպես տեսանք, Առաքել Դավրիժեցու «Պատմության» հավելվածում բերվող տեղեկություններում հավաստված է ակնաքարերը գունային հատկանիշներով տարբերելու նպատակով դրանք բույսերի գույների հետ համեմատելու՝ արևելքում լայնորեն տարածված սովորությունը (գմբուխտի համար հիշվում են ըողիանի = սամիթի, ռեհանի, բանջարի տարբերակները, նաև Յոթանասնից արձանագրությունը):



Նկ. 1

Գահանակի՝ ո՞ր ակնաքարը լինելու հարցի վերջնական լուծումը, մեր կարծիքով, տալիս է Սևանա լճի հյուսիս-արևելյան ափին, Շորժա գյուղի մոտակայքից հայտնի մի խաչքարի արձանագրությունը (խաչքարը վերջերս տեղափոխվել է էջմիածին և ագուցվել նախկին Վեհարանի պատին)<sup>26</sup>: Նրա վրայի արձանագրությունը հրատարակել է Սեդրակ Բարխուդարյանը՝ հետևյալ վերծանությամբ<sup>27</sup>.

ԱԾ. ՈՂՈՐՄԻ ԱԻԵՏԻՍ ԱՂԻ Հ[Ո]ԳԻՆ, Ո... | ԻՇԵՅ[ԷՔ] ԱԻԵՏԻՍ ԱՂ  
| ԷՍ, ԳԵՂԻՍ Կ: (60) ՏԱՐԻ ՏԱ | ՆԴՐՈՒԹԻԻՆ | ԱՐԻ ՄԷԼԻ | Ք  
ՊԷԿԻ Չ | ԱԵՈՎ | Ն. ԻՄ ՍԱՐՀ | ԱՏՆ ԷՍԱՅ |. ԱՂԱՅՔԱՐ | Ի  
ՉՈՐԷՆ Դ[ԱՀԱՆԿՆ], ԱՂՊՈՒԼ | [Ա]ՂՆ:

Գահանակի խնդրին անդրադառնալուց առաջ անհրաժեշտ ենք համարում նշել արձանագրության հետ կապված երկու սրբագրություն.


1. Խաչքարի ճակատի արձանագրության Հ[Ո]ԳԻՆ բառից հետո նշված Ո-ի փոխարեն պիտի լինի ՌԼ, որ պարզորոշ երևում է տեղում, ինչպես նաև լուսանկարի վրա (նկ. 1): Նշված տառերը արձանագրության տեքստի հետ չեն առնչվում և ըստ երևույթին ցույց են տալիս թվականը, ըստ որում՝ թվականը տեքստից անջատելու նպատակով սովորական կետերի փոխարեն դրված են հորիզոնական գծիկներ: Եղծված տառը, ներքևի աջ ելուստից դատե-

26 Այս խաչքարի արձանագրության մեջ դահանակ տերմինի առկայության մասին մեզ առաջին բանավոր տեղեկությունը հայտնեց Ս. Տ. Սաղումյանը:

27 «Գիվան հայ վիմագրության», պրակ 4, Երևան, 1973, էջ 384:

լով, կարող էր լինել Ը կամ Լ, և թվականը համապատասխանաբար կվերծանվեր 1559 կամ 1581: Նկատի ունենալով, որ ըստ Ս. Բարխուդարյանի «Մելիք Մելիք-բեգը իշխել է XVI դարի երկրորդ կեսին, հիշատակված է մինչև 1578 թվականը»<sup>28</sup>, ճիշտ պետք է համարել ՌԸ (1559) վերծանությունը:

2. Խաչքարի կողի մեծ արձանագրության (նկ. 2) «ղահանկն» բառը պետք է սրբագրվի «ղահանխախկն» ինչպես արվել է «Աղպուլաղն»-ի դեպքում:



նկ. 2

Այժմ անդրադառնանք զահանակի բուն խնդրին:

Նկատի ունենալով Ավետիս աղայի տանուտեր լինելու հանգամանքը, արձանագրության մեջ նշված՝ «իմ սարհատն էսայ» արտահայտությունը, մեր կարծիքով, պետք է հասկանալ որպես Շորժա գյուղի հողային տիրույթների սահմանագծման փաստ: Արձանագրության մեջ հիշվող «Աղպուլաղն» ճշտորեն որոշվում է ներկայիս Աղբուլաղ գյուղի աղբյուրների տեղագրությամբ (գյուղը հիմնադրվել է շատ ավելի ուշ՝ XVIII—XIX դդ.), որոնք նշում են սահմանների հյուսիսային եզրը: Շորժա գյուղը տեղադրված է Սևանա լճի հյուսիսային ափին, որով առանց դժվարության հասկանալի է դառ-

նում գյուղի տիրույթների հարավային սահմանների հարցը:

Շորժայից 5 կմ արևելք է տեղադրված հին Արտանիճ (Արտանուճ) գյուղը, որի շրջակայքից Ս. Բարխուդարյանը նշում է 1009 և 1216 թվակիր արձանագրությունները<sup>29</sup>: Գյուղի անունը փոքր-ինչ աղավաղված ձևով հարատևում է մինչև մեր օրերը, որով և անկասկած է նրա գոյությունը XVI դարում: Այսպիսով, Շորժա գյուղի արևելյան սահմանը պետք է գտնվեր երկու գյուղերի միջև: Միջանկյալ ջրբաժանի ձևով գոյություն ունի այդպիսի մի բնական սահման, դեպի ուր օգտագործելի վարելահողերը ինչպես Շորժայի, այնպես էլ Արտանիճի կողմից նեղանալով, ի շիք են դառնում: Նշված ջրբաժանը այսօր էլ հանդիսանում է Շորժա և Արտանիճ գյուղերի հողերի սահմանը և, ըստ ամենայնի, նույն դերն է ունեցել նաև հնում: Շորժա գյուղի արևելյան սահմանի տեղորոշումը որոշ հիմք է տալիս նման հեռավորության վրա փնտրելու նաև արևմտյան սահմանը (մինչև Թոխլուջա գետակի գետաբերանը, որ նույնացվում է հին Դրախտիկի հետ)<sup>30</sup>: Այս միջանկյալ տարա-

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 291:

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 382:

<sup>30</sup> Ղ. Ա. Ի շ ա ն, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 76:

ծուծությունում կա միայն մի՝ քամիներից լավ պաշտպանված ձորակ, որ կարող էր հիշատակելի լինել արձանագրության մեջ: Աշխատանքների ընթացքում ձորակի աջ արևկող ափին, գետարևոսնի մոտ հայտնաբերվեցին տապանաքարեր հիշեցնող սալաքարերի երկու խումբ և հին շինությունների մնացորդներ (տնատեղեր): Լանջի ցածրագիր մասում գտնվող սալաքարերի մեծ մասը օգտագործվել է ժամանակակից գոմի շինարարության ժամանակ, իսկ լանջով վեր տեղադրված սալաքարերի երկրորդ խումբը պահպանվել է անխաթար վիճակում: Սալերից մի քանիսը տեղադրված են հողաշերտից զուրկ ժայռեղեն հիմքի վրա, որով բացառվում է նրանց տապանաքարեր լինելու հնարավորությունը: Հին շինություններին կից հողաշերտը հարստացած է հումուսով, որը հուշում է նրանց գոմեր լինելու հանգամանքը: Այս բոլոր տվյալները ենթադրել են տալիս, որ սա հենց արձանագրությունում հիշվող «Աղաքարի ձորն» է: Այդ ձորի և Սևանա լճի միջև ջրբաժան լեռնամասի հյուսիսային լանջին պահպանվել են ներկայումս չօգտագործվող սալուղու հետքեր, որը «Աղաքարերի գոմահանգը» միացնում է Շորժա գյուղի հետ և այդպիսով լուծում նաև նրա պատկանելության հարցը: Այսպիսով, արձանագրությունում հիշվող «Դահանակ» սահմանային վայրը մնում էր փնտրել Շորժայից արևելք:

Շորժա և Արտանիճ գյուղերի բնական սահման հանդիսացող միջանկյալ ջրբաժանից մի փոքր հյուսիս-արևմուտք գտնվում է գերհիմքային ապառնների հետ ծագումնաբանորեն կապված, Շորժայի քրոմի հայտնի հանքավայրը (ներկայումս սպառված): Հանքավայրի և շրջակա տեղամասերի սկզբների (ԱՊՈՒՄ) հատուկ ուսումնասիրությունների ընթացքում քրոմի հանքանյութերից բացի հայտնաբերվեցին նաև նոնաքարերին պատկանող հատիկներ, այդ թվում՝ կանաչ նոնաքարի բաղմամբիվ հատիկներ<sup>31</sup> (հատկանշական է, որ նման ուսումնասիրությունները Աղաքարերի ձորակում ոչ մի ուշագրավ արդյունքի չհասցրին): Շորժայի հանքավայրում երկար տարիներ աշխատած, ներկայումս Հայկական երկրաբանական վարչության թանգարանի տնօրեն Գևորգ Արուտչյանի օգնությամբ քրոմի հանքավայրի թափոններից հայտնաբերվեցին նաև կանաչ նոնաքարի մեծ բեկորներ: Հանքանյութերի կազմում որևէ այլ կանաչ տարրերակ, որը օգտագործելի լիներ որպես ակնաքար, չհայտնաբերվեց: Այսպիսով, դահանակը անսխալ նույնացվում է քրոմ պարունակող հազվագյուտ կանաչ նոնաքարի հետ, որը ժամանակակից հանքաբանությանը հայտնի է XIX դարից՝ ուվարովիտ անվամբ<sup>32</sup>: Դահանակը քրոմի հանքաքարի մեջ հանդիպում է մինչև 1,5 սմ հաստությամբ հոծ երակների ձևով և աչքի է ընկնում գրավիչ վառ կանաչ գույնով: Նոնաքարերի համար բնորոշ բնական լավ աճած բյուրեղային ձևերի բացակայությամբ է պայմանավորված վերջիններիս հատուկ փայլի բացակայությունը. կանաչ է՝ առանց նշուղի (ինչպես նշել են հին հեղինակներից ոմանք):

Շորժայի քրոմի հանքավայրի հին փորվածքների թափոնների ուսումնասիրությունը հիմք է տալիս ենթադրելու, որ հանքավայրը հնում շահագործվել է դահանակ ակնաքարի հանույթի նսպատակով: Ինչ վերաբերում է շա-

31 Սկզբների հանքաբանական ուսումնասիրությունները կատարվել են երկրաբանական վարչության սկզբների լաբորատորիայում:

32 А. Г. Бетехтин, Курс минералогии, М., 1951, էջ 364—367:



Հագործման ժամանակի հարցին, ինչպես տեսանք, դահանակի հիշատակությամբ խաչքարը կանգնեցվել է 1559 թ., Ավետիս աղայի կենդանության օրոք, երբ նա արդեն 60 տարի տանուտիրություն էր արել: Ըստ այդմ կարելի է ենթադրել, որ «Դահանակն» տեղանունը գոյություն ուներ առնվազն XV դարի վերջերից: Չբացառելով հանքավայրի շահագործման հնարավորությունը XV—XVI դդ., պետք է նկատի ունենալ նաև ավելի վաղ ժամանակներում դահանակի հանույթի՝ որից և «Դահանակն» ավանդաբար հիշվող տեղանվան հնարավորությունը:

Այսպիսով, դահանակի օրինակով ասլացուցվում է հին գրավոր աղբյուրների քննությամբ հնում շահագործված հանքավայրերի վերահայտնաբերման հնարավորությունը:

#### О ТЕРМИНЕ «ԴԱՀԱՆԱԿ»

К. А. МКРТЧЯН

(Резюме)

В армянском переводе Библии, а также в средневековых письменных источниках встречается термин «*դահանակ*» (даһанак), который почти всегда сопровождается определяющим словом «акн», т. е. «драгоценный камень». Однако до сих пор не выяснено, какой из драгоценных камней подразумевается под этим названием. Решению вопроса способствует сопоставление данных первоисточников. Важнейшее значение имеет, в частности, надпись на хачкаре, поставленном в местности Шоржа на северо-восточном берегу оз. Севан, в которой отмечается урочище «даһанак». Наличие в этой местности месторождения хромитов, сопровождаемых драгоценной зеленой разновидностью граната, позволило установить, что «акн даһанак» принадлежит к группе гранатов, характеризуется ярким зеленым цветом и соответствует уваровиту современной минералогии.